ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

06 մայիսի 2022թ-ին կնքված N «ՀՀՎԱ-ՄԱ-ԾՁԲ-22/45» ծածկագրով՝
Պետության կարիքների համար աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր

ք.Երևան « » դեկտեմբերի 2022թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտոր Խաչատուր Ղազեյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետը, ինչպես նաև «ՀՀՎԱ-ՄԱ-ԾՁԲ-22/45» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն:

1.2 Հաստատել Տեխնիկական բնութագիր - Գնման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի և Վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 2-ի:

1.3 Համաձայնագիրն ուժի ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2022թ-ի դեկտեմբերի 06-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կատարող**
Վարչապետի աշխատակազմ	ՀՀ պետական կառավարման ակադեմիա
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,	ք.Երևան, Կիևյան-8
Կառավարական տուն 1	Երևանի թիվ 1 ՏԳԲ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 900018005646
Հ/Հ 900011022085	ՀՎՀՀ 00035088
ՀՎՀՀ 02505554	
---	---
/ ստորագրություն / Կ.Տ	/ ստորագրություն / Կ.Տ

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2022.12.22 17:47:14 GMT+04:00

Digitally signed by GHAZEYAN KHACHATUR 2408850088
Date: 2022.12.22 17:37:55 AMT

Հավելված թիվ 1
«06» մայիսի 2022թ. կնքված
ՀՀՎԱ-ՄԱ-ԾՁԲ-22/45 ծածկագրով պայմանագրի
« » դեկտեմբերի 2022թ. կնքված N 1 Համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհա-նուր առավել-գույն գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79631200/29	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-1 ՀՀ Սահմանադրություն: • ՀՀ Սահմանադրություն: • Պետական կառավարման սահմանադրական հիմունքներ: Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թիվը՝ 4: Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ:	դրամ	17 952	1	ՀՀ, Երևան քաղաքում, մատակա-րարի նշած հասցեում:	2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ
2	79631200/30	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-2 Աշխատանքային օրենսդրություն • Աշխատանքային օրենսդրությունը և դրանով կարգավորվող հարաբերությունները: • Աշխատանքային հարաբերություններ, աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքերը, աշխատանքային հարաբերությունների կողմերը: • Աշխատանքային իրավունքների իրականացումը և պաշտպանությունը: • Անհատական աշխատանքային հարաբերություններ: • Աշխատանքային պայմանագրի տեսակները: • Աշխատանքային պայմանագրի կատարումը: • Աշխատանքային պայմանագրի լուծումը: • Աշխատողների անձնական տվյալների պաշտպանությունը: • Աշխատաժամանակ և հանգստի ժամանակ: • Աշխատանքային կարգապահությունը: Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թիվը՝ 4: Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ:	դրամ	17 952	1	ՀՀ, Երևան քաղաքում, մատակա-ռարի կողմից նշած հասցեում:	2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

3	79631200/31	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-3 Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրություն • Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը: • Քաղաքացիական ծառայողների վերապատրաստումը: • Քաղաքացիական ծառայողների իրավական վիճակի առանձնահատկությունները: • Քաղաքացիական ծառայողների աշխատանքային հարաբերությունների առանձնահատկությունները: • Ծառայության դադարումը, քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելը, լիազորությունները դադարեցնելը: Վերապատրաստման քաղաքացիական ծառայողների թիվը՝ 5: Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ:	դրամ	22 440	1	ՀՀ, Երևան քաղաքում, մատակա-ռարկի նշած հասցեում:	2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ
4	79631200/32	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-4 Մարդկային ռեսուրսների կառավարում • Մարդկային ռեսուրսների կառավարումը պետական կառավարման համակարգում: • Մարդկային ռեսուրսների կառավարման նորմատիվ-իրավական ապահովում: • Անձնակազմի և կադրային ներուժի գնահատում: • Կադրային պահանջարկի պլանավորում: • Անձնակազմի շարժի կառավարում: • Անձնակազմի մոտիվացում: • Անձնակազմի վարքագծի կառավարում: • Բարեվարքություն: • Բարենպաստ հոգեբանական միջավայրի ստեղծում: • Անձնակազմի սոցիալական պաշտպանվածություն: • Աշխատանքի կատարողականի գնահատում և կառավարում: Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թիվը՝ 7: Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ:	դրամ	31 416	1	ՀՀ, Երևան քաղաքում, մատակա-ռարկի նշած հասցեում:	2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

5	79631200/33	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-5 Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն • ՀՀ միջազգային ինտեգրացումը. հեռանկարներ և մարտահրավերներ: • ՀՀ արտաքին քաղաքականության գերակա ուղղությունները: • Ազգային անվտանգության հիմնախնդիրները: • Գլոբալացում և ազգային ինքնություն: • Պետական քաղաքականության տեղեկատվական սպասարկումը: • ՀՀ արտաքին քաղաքականության առևտրատնտեսական կապերի հիմնահարցերը: Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թիվը՝ 8: Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ:	դրամ	35 904	1	ՀՀ, Երևան քաղաքում, մատակա-ռարկի նշած հասցեում:	2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ
6	79631200/34	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-6 Ֆինանսաբյուջետային քաղաքականություն • Ֆինանսների կառավարումը պետական կառավարման համակարգում: • Բյուջեի ձևավորում: • Ծրագրային բյուջետավորում: • Բյուջեի կատարում: • Ֆինանսատնտեսագիտական վերլուծություններ: • Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում: • Հարկեր և պարտադիր այլ վճարներ: Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թիվը՝ 1: Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ:	դրամ	4 488	1	ՀՀ, Երևան քաղաքում, մատակա-ռարկի նշած հասցեում:	2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ
7	79631200/35	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-7 Իրավական ակտերի մշակման առանձնահատկու-թյուններ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք և օրենքից բխող ենթաօրենս-դրական ակտեր, այդ թվում՝ • իրավաստեղծ գործընթացի ընդհանուր նկարագիրը. • օրինաստեղծ գործընթաց. • իրավական ակտերի մշակման տեխնիկա. • հղումների կիրարկումն իրավական ակտում. • իրավական ակտերի փորձաքննությունը և ժամկետները. • իրավական ակտերի մեկնաբանումը և պարզաբանումը. • հանրային քննարկումներ: Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թիվը՝ 8: Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ:	դրամ	35 904	1	ՀՀ, Երևան քաղաքում, մատակա-ռարկի նշած հասցեում:	2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

8	79631200/36	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-8 Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթ • Վարչարարության հիմնարար սկզբունքները: • Վարչական վարույթ: • Վարչական վարույթի փուլերը: • Վարչական ակտը, դրա տեսակները և ձևերը: • Վարչական ակտ ընդունելը, դրա մասին իրազեկելը, վարչական ակտի ուժի մեջ մտնելը: • Բողոքարկման վարույթ: • Վարչական ակտի հարկադիր կատարման վարույթ: • Պատասխանատվության հատուկ կանոններ: Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թիվը՝ 9: Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ:	դրամ	40 392	1	ՀՀ, Երևան քաղաքում, մատակա-ռարի նշած հասցեում:	2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ
9	79631200/37	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-9 Անվտանգային քաղաքականության արդի հիմնախնդիրներ /տեղեկատվական անվտանգություն/ • Ռազմավարական փաստաթղթերի մշակման մեթոդաբանություն: • Անվտանգային և պաշտպանական ոլորտների հիմնախնդիրներ: • Քաղաքականության մշակման մեթոդաբանություն: • Հետազոտությունների ժամանակակից մեթոդաբանություն: • Տեղեկատվական անվտանգություն: Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թիվը՝ 4: Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ:	դրամ	17 952	1	ՀՀ, Երևան քաղաքում, մատակա-ռարի նշած հասցեում:	2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ
10	79631200/38	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ- 10 Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում • Հաշվապահական հաշվառման կարգավորումը: • Հաշվապահական հաշվառման կազմակերպումը և վարումը: • Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելը և ներկայացնելը: • Պատասխանատվությունը հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջները խախտելու համար: Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թիվը՝ 1: Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ:	դրամ	4 488	1	ՀՀ, Երևան քաղաքում, մատակա-ռարի նշած հասցեում:	2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

** ՀՀ պետական բյուջեի միջոցներով քաղաքացիական ծառայողների վերապատրաստում իրականացնող կազմակերպությունը պետք է համապատասխանի ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված կարգի 3-րդ մասի չափանիշներին:*

Վերապատրաստումներն անհրաժեշտ է իրականացնել նշված որոշմամբ սահմանված կարգի ընթացակարգերին համապատասխան: Դասընթացները պետք է պարունակեն ուսումնական նյութի յուրացումը ստուգող 20-40 թեստային առաջադրանքից կազմված թեստ:
*** Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*****Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ վերապատրաստմանը մասնակցած քաղաքացիական ծառայողների թվին համապատասխան:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական կառավարման ակադեմիա
ք.Երևան, Կիևյան-8
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018005646
ՀՎՀՀ 00035088

Digitally signed by GHAZEYAN KHACHATUR 2408850088
Date: 2022.12.22 17:36:45 AMT

..... Կ.Տ. /ստորագրություն/

..... Կ.Տ. /ստորագրություն/

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2022.12.22 17:50:05 GMT+04:00

Հավելված N 2
«06» մայիսի 2022թ. կնքված
ՀՀՎԱ-ՄԱ-ԾՁԲ-22/45 ծածկագրով պայմանագրի
« » դեկտեմբերի 2022թ. կնքված N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	Մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79631200/29	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	-	-	-	-	8 976	8 976	13 464	13 464	13 464	17 952	17 952	17 952	17 952
2	79631200/30	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	-	-	-	-	8 976	8 976	13 464	13 464	13 464	17 952	17 952	17 952	17 952
3	79631200/31	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	-	-	-	-	11 220	11 220	16 830	16 830	16 830	22 440	22 440	22 440	22 440
4	79631200/32	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	-	-	-	-	15 708	15 708	23 562	23 562	23 562	31 416	31 416	31 416	31 416
5	79631200/33	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	-	-	-	-	20 196	20 196	30 294	30 294	30 294	35 904	35 904	35 904	35 904
6	79631200/34	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	-	-	-	-	2 244	2 244	3 366	3 366	3 366	4 488	4 488	4 488	4 488

7	79631200/35	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	-	-	-	-	17 952	17 952	26 928	26 928	26 928	35 904	35 904	35 904	35 904
8	79631200/36	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	-	-	-	-	20 196	20 196	30 294	30 294	30 294	40 392	40 392	40 392	40 392
9	79631200/37	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	-	-	-	-	6 732	6 732	10 098	10 098	10 098	17 952	17 952	17 952	17 952
10	79631200/38	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	-	-	-	-	2 244	2 244	3 366	3 366	3 366	4 488	4 488	4 488	4 488

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական կառավարման ակադեմիա
ք.Երևան, Կիևյան-8
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018005646
ՀՎՀՀ 00035088

Digitally signed by GHAZEYAN KHACHATUR 2408850088
Date: 2022.12.22 17:39:17 AMT

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2022.12.22 17:48:36 GMT+04:00

.....
Կ.Տ.
/ստորագրություն/

.....
Կ.Տ.
/ստորագրություն/